Եթէ նորին կողքին ունիք նաեւ հին համակարգիչ մը, ապա այդ երկուքով համակարգիչներու փոքր ցանց մը ստեղծելը կրնայ օգտակար ըլլալ՝ «Ուինտոզ 95»-էն սկսեալ «Ուինտոզ» իր ըրող դրուածութիւնները կարելիութիւն կ'ընձեռեն դիւրութեամբ համակարգիչներ միացնելու: Ինչ կը վերաբերի հարկ եղած հարտուէրներուն, ապա հաւանաբար հին համակարգիչին համար կարիքը ըլլայ «ին-թը 3» ֆայլերը եւ այնտեղ արձանագրելով երաժշտական ֆայլեր նուազող ծրագիր մը, սարքը վերածել սթեբիլի: Բնականաբար այստեղ հարկ է չբաւարարուել համակարգիչի ձայնային դրութեամբ:

մար կարիքը ըլլայ «ին-թը 3»-էն քարտի մը (նոր համակարգիչներ արդէն օժտուած են այս քարտով), որ կ'արժէ շուրջ 15 տոլար, ինչպէս նաեւ յատուկ քէյպլըներու: Համակարգիչները իրարու միացնելու գործընթացը մանրամասնօրէն՝ բացատրուած է www.wown.com եւ www.pcmag.com/networking հասցեով կայքերուն մէջ:

Բ. ՀԱՄԱԿԱՐԳԻԶԸ ՎԵՐԱԾԵԼ ՍԹԵՐՆՈՅԻ

Կարելի է հին համակարգիչին մէջ տեղադրել ձեռք «Իմ. Փ. 3» ֆայլերը եւ այնտեղ արձանագրելով երաժշտական ֆայլեր նուազող ծրագիր մը, սարքը վերածել սթեբիլի: Բնականաբար այստեղ հարկ է չբաւարարուել համակարգիչի ձայնային դրութեամբ:

Գ. ՄԵՎԵ ԱՒԵԼԻ ԱՆՉԵՐՈՎ ԽԱՂԵՐ ԸՄՔՈՇԵՆԵԼ

Եթէ ընտանիքի անդամներ կը դժգոհին, թէ երկար ժամանակ կ'անցընէք առանձին, համակարգիչին խաղեր խաղալով, կրնաք անոնց եւս

հրաւիրել եւ երկու կամ երեք հոգիով համակարգիչին խաղեր խաղալ՝ օգտագործելով նեթուրքի դրութիւնը: Բնականաբար, այստեղ հարկ է գտնել խաղեր, որոնք կը յարմարին հին համակարգիչներուն, անոնցմէ լաւագոյնը «DOOM 95»-ն է, որ հեղասահօրէն կը գործէ ամէնէն հինէն մինչեւ նորագոյն համակարգիչներուն վրայ: Խաղը կարելի է արձանագրել համացանցէն: Զայն գտնելու համար «Կուկլը»-ի մէջ գրել «DOOM 95 1,9» եւ փնտրել:

Դ. ՀԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻԶԸ ՆՈՒԻՐԵԼ ԳՊՐՈՑՆԵՐՈՒ ԿԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԿԱՉՍԿԵՐՊՈՒԹԻՆՆԵՐՈՒ

Կարգ մը դպրոցներու մէջ տակաւին համակարգիչը չէ թափանցած...

Ե. «ՓՈՐՉԵՐ» ԿԱՍԱՐԵՅԷՔ ԱՆՈՐ ՎՐԱՅ

Հին համակարգիչներ «իտէլական են» համակարգիչներու կտորներ փոխել կամ նորոգել սորվողներուն համար...


ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՎԵՐՃԸՆ ՓԱԼՍ ՓՈՐԹԸՊԸԼ»



«Վերճըն Փալս Փի.» «Տի. Վի. Տի.»-ն կը պարունակէ պատկերասփիւռ, ձայնասփիւռ եւ «Տի. Վի. Տի.» փլէյլը: 10,4 ինչ պատաստով այս փոքր սարքը կարելի է դիւրաւ փոխադրել մէկ վայրէն միւսը: 500 տոլար արժող այս սարքին մասին տեղեկութիւններ կարելի է գտնել www.virginpulse.com հասցեով կայքին մէջ:

«ՄՈԹՈՐՈԼԼԱ ԱՅ. ԷՄ. ՖՐԻ»



Այս փոքր սարքին շնորհիւ կարելի է «Էյ. Օ. Էյ. Ին-թընթ մեհենճըր» գործածելով համացանցային գրոյցներ կատարել, նոյնիսկ եթէ համակարգիչն քանի մը տասնեակ մեթր հեռավորութեան վրայ կը գտնուի: 100 տոլար արժող այս սարքին մասին յաւելի տեղեկութիւններ տրամադրելի են www.motorola.com հասցեով կայքին մէջ:

Պատրաստեց՝ ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

2004՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ

Ինչպէս ծանօթ է մեր ժողովուրդին գաւակներուն, 2003 տարին Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոսին կողմէ հռչակուած էր «Աստուածաշունչի Տարի»: Երկայ տարուան ընթացքին թէ՛ Անթիլիասի Մայրավանքին եւ թէ՛ մեր թեմերուն մէջ գանազան ձեռնարկներու եւ աշխատանքներու ձաւորով վերարժեւորուեցաւ Աստուածաշունչին առանցքային դերը մեր ժողովուրդի կեանքին մէջ: Զաջալերուած՝ մեր ժողովուրդի գաւակներուն ցուցաբերած ընդառայուն, ինչպէս նաեւ մեր հաւաքական կեանքին մէջ ընտանիքին կենսական տեղը ու դերը լուսարձակի տակ բերելու նախաձեռնողութեամբ, վեհափառ հայրապետը 2004 տարին հռչակեց «Հայ Ընտանիքի Տարի»: Այս ուղղութեամբ վեհափառ հայրապետը յատուկ պատգամ մը պիտի ուղղէ մեր ժողովուրդի գաւակներուն, եւ դարձեալ յառաջիկայ տարուան ընթացքին մեր թեմերուն մէջ գանազան ձեռնարկներու ձաւորով պիտի վերաշնչուուի հայ ընտանիքին վիճակուած կարեւոր առաքելութիւնը: Վեհափառ հայրապետին պատգամը պիտի կարգաւորուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յառաջիկայ Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003ին, ընթացք Սուրբ եւ անմահ պատարագին: Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի գաւակներուն ներկայ գտնուելու Ս. պատարագին եւ հետեւելու վեհափառ հայրապետի հռչակագիրի ընթերցման:

ԴԻՒՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

«ՍՈՆԻ»Ի ՄԱՐԴԱՄԵՔԵՆԱՆ ՎԱԶԵԼ ԿԸ ՍՈՐՎԻ




«Սոնի» ընկերութեան արտադրած ռոպոթը, որ ցարդ միայն քալելով կը բաւարարուէր, արդէն կրնայ վագել, զնդակներ հարուածել եւ պարի շարժումներ կատարել: Թէեւ առաջին ակնարկով այս մէկը մեծ իրագործում մը չէ թուիր ըլլալ, սակայն խորքին մէջ այդպէս է: Գիտնականները գայն կը նկատեն «հանճարեղ» նուաճում՝ տրուած ըլլալով, որ ռոպոթի մը ցատկէ տալը դիւրին բան է: «Սոնի» թէեւ նախապէս յայտարարած էր, թէ ռոպոթը պիտի վաճառուի գերարդիական ինքնաշարժի մը գինով, սակայն վերջերս հրաժարած է գայն ծախելէ: Փոխարէնը, ռոպոթը կ'օգտագործուի իրրեւ «Սոնի» ընկերութեան «դեսպան»ը:

Սակայն, առայժմ կարելի չէ ակնկալել, որ «Սոնի»-ի ռոպոթը աթլէթի մրցումներու մասնակցի: Ան մէկ վայրկեանի մէջ 46 ոտք միջոց կրնայ կտրել միայն, սակայն այդ մէկը արդէն նուաճում մըն է տրուած ըլլալով, որ իր նախորդը շատ աւելի դանդաղ կերպով կը շարժէր:

Ռոպոթներու համար վագելը եւ քալելը կը տարբերին յատկապէս որովհետեւ վագելու պարագային ռոպոթին երկու ոտքերը օդին մէջ պէտք է ըլլան, իսկ այդ մէկը իրագործելը դժուար է:

ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԿՈՄԻՏԱՍ» ՄԱՍՆԱԾԻՂ ՊԵՅՐՈՒԹ

ԿԱՂԱՆԴԻ ԽՐԱԽՃԱՆՔ

Մասնակցութեամբ
ՍԱՐՕ ԵՒ ՍԱՐՈՅԻ ԵՒ MUSIC PEOPLE

Չորեքշաբթի, 24 Դեկտեմբեր 2003, Երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ:
Crown Plaza պանդոկի Queen of Colonies Grand Ballroom սրահին մէջ.
Համրա:

ԾԱՆՕԹ.- Տեղերը ապահովել հեռաձայնելով հետեւեալ թիւերուն՝
01-377862, 03-617955 եւ 03-460322:

«ԱԶԳԱԿ»Ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

www.aztagdaily.com

Մանկապատանեկան



ԿԱՂԱՆՂ ՊԱՊԱՅԻՆ ԳԻՒՂԸ

Եւրոպայի հիւսիսը, Ֆինլանտայի խորքերը գոյություն ունի Լափոնին: Իսկ այդ շրջանին մէջ կայ Ռոփանիէմի անունով գիւղ մը: Կ'ըսեն, թէ հոն կ'ապրի Կաղանղ Պապան: Հոն ամէն ինչ ճերմակ է: Նոյեմբերի վերջաւորութեան արդէն ամէն օր, Եւրոպայի չորս կողմերէն եկած հազարաւոր զբոսաշրջիկներ կ'իջնեն օդանաւէն այցելելու համար Կաղանղ Պապային գիւղը: Որովհետեւ Ռոփանիէմի ինքզինքը հռչակած է «Կաղանղ Պապային պաշտօնական մայրաքաղաքը» 1995ին:

Օգտակարանէն դուրս զբոսաշրջիկները կրնան դիտել հիւսիսային եղջերուները, եւ ապա՝ անոնք կ'ուղղուին դէպի Կաղանղ Պապային քաղաքը: Այս նախկին հիւսիսային ռուսերի դէմ պատսպարանը դարձած է հսկայական ստորերկրեայ խաղաղարար մը: Վերջապէս, այցելուները կը պատին Ռոփանիէմի մէջ, որ խանութներով լեցուն գիւղ մըն է:

Ճամբորդութիւնը կը վերջանայ Կաղանղ Պապային շալիէին մէջ, ուր անոնց կը սպասէ Կաղանղ Պապային հետ նկարահանումը:

ՀԱՐՑԱՐԱՆ

ԿՐՆԱՍ ԼԱՒ ԿԱՂԱՆՂ ՊԱՊԱ ՄԸ ԸԼԼԱԼ

Եթէ Կաղանղ Պապան որոշէր ինքզինքը հանգստեան կոչել, պիտի կարենայի՞ր անոր փոխարինել:

1) Բու նախընտրած տօնը:
 + - Հայրուհին:
 X - Տարեդարձը:
 - - Կաղանղ:

2) Դու կը շինես կաղանղի նուէրներդ:
 - Ամէն տարի ամբողջ ընտանիքիդ համար:
 X - Միայն երբ ստիպւած ես, դպրոցը:
 + - 31 Դեկտեմբերին, երբ մտադած ես գնելու:

3) Եթէ քեզի առջարկ են աշխարհի շուրջը պտոյտ ընել:
 + - «Համաձայն եմ, բայց ո՞չ ձմեռը»:
 X - «Ո՛ւ, ես բնա չեմ սիրեր ճամբորդութիւնները»:
 - - «Ի՛նչ աղուոր նուէր»:
 4) Դու կը մտածես կաղանղին:
 X - Մէկ ամիս առաջ

ցուցափեղկերը դիտելով:
 - - Ամբողջ տարին, ամէն ինչի մասին մտածելու ժամանակ ունենալու

Պապայի մը համար:
 + - Նուէրներուն տոպրակը շատ չճանարեռնելը:
 X - Տոպրակին մէջէն ոչ մէկ նուէր գողնալը:
 - - Տոպրակը շալկելը:
 6) Եթէ դուն Կաղանղ Պապային հանդիպէիր, ի՞նչ պիտի հարցնէիր անոր:
 - - «Ի՞նչպէս կարելի է Կաղանղ Պապա դառնալ»:
 + - «Ի՞նչ նուէր պիտի բերէք ինձի այս տարին»:
 X - «Ի՞նչո՞ւ այս խնդրիք տարազը կը հագնիք»:

ԱՐԳԻՒՆՔՆԵՐ
 - Եթէ մեծ թիւով - ունիս
 Դու ն սքանչելի Կաղանղ Պապա մը կրնաս ըլլալ: Անկասկած, երբ Կաղանղ Պապան հանգստեան կոչուի, բուն մասիդ պիտի մտածէ իրեն փոխարինելու համար:
 - Եթէ մեծ թիւով + ունիս
 Վստահաբար, որ պիտի կարենաս Կաղանղ Պապային փոխարինել, սակայն մարգուելէ ետք: Կրնաս նաեւ սկսիլ անոր օգնականը դառնալով:
 - Եթէ մեծ թիւով X ունիս
 Կաղանղ Պապա ըլլալը քեզի յարմար արհեստ մը չէ: Եթէ կ'ուզես տակաւին ցուրտները ստանալ, շուրջը պետք է փնտռես Կաղանղ Պապային փոխարինող մը:

NEW 2003-2004 ARMENIAN NEW YEAR & XMAS SONGS
 RECORDED IN YEREVAN

A David De Sahakian Production

Վոյս Երգիչ

ՉՍԵՆ ՊԱՊԸ
 ՊԱՐՈՒՍ Է
ՉՈՉՎԵՐ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԵՒ Ս. ՏՆՈՒՆԴԻ ԵՐԳԵՐ

Օրիփճըլ CDիցերը եւ քասեթերը կը վաճառուին միայն

VOICE OF STARS Ի մօտ
 92 Marash Street, Bourj Hammoud, Lebanon Tel.: 961-1-445449
 World Wide: VOICE OF STARS 1875 Queensberry Road Pasadena, CA, 91104 USA, Telefax: 1-626-797 12 28

ԶԵՆՈՒՅԻՆ ԱԶԽԱՏԱՆԸ


ԿԱՂԱՆՂ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐ

Կաղանղի շրջանին ամբողջ տունը տօնական մթնոլորտի մէջ կ'ըլլայ:


Ա. Գրան վրայ
 Պնակէ պսակը: Պէտք ունիս՝ խաւաքարտէ մեծ պնակ մը, ժապաւէն, թուղթի գնդիկներ, խէփ: Չափահասէ մը խնդրէ, որ պնակին կեդրոնը քաբըրով մը կտրէ: Պնակին ծայրերը եռանկունաձեւ կտրէ: Թուղթի գունաւոր գնդիկները փակցուր պսակին շուրջ: Մէկ ծայրը կապէ ժապաւէնը եւ պսակը ամրացուր դրան վրայ:




Պարանէ պսակը: Պէտք ունիս՝ 3 մեթր պարան, կանաչ խաւաքարտ, թուղթի կարմիր գնդիկներ (կամ կարմիր կաւ), խէփ: Պարանը երեք հաւասար մասերու բաժնէ: Չանոնք հիւստէ, եւ անոնց ծայրերը ձգախէփէ պարանով կապէ: Հիւստով պսակ մը կազմէ: Պարանը պսակին շուրջ փակցուր, ծայրը կապէ: Կանաչ խաւաքարտին վրայ գծէ եւ կտրէ Կաղանղի տերեւները: Չանոնք փակցուր պսակին վրայ, անոնց վրայ ալ փակցուր կարմիր գնդիկները:



Բ. Պապուհաններուն վրայ
 Հսկայ փաթիլները: Պէտք ունիս՝ ճերմակ թուղթ, կամ թափանցիկ թուղթ (քալթ), երկկողմանի փակչոց երիզ: Թուղթին վրայ գծէ եւ կտրէ կտրակ մը (կրնաս նաեւ քստանկուն ձեւեր գծել): Չայն շուրսի ծալլէ: Ծայրերը ձեւեր կտրէ: Բաց թուղթը եւ փակչոցները երիզով գալն պատուհանին վրայ փակցուր:




Չարդարանքի երիզներ: Պէտք ունիս՝ նուէրի ժապաւէն, գունաւոր թուղթեր, խէփ, փակցնելիք երիզ: Թուղթին վրայ գծէ եւ կտրէ զանազան ձեւեր (աստղ, եղեւին, տուն, սիրտ...): Պատուհանին հասակին չափով ժապաւէններ կտրէ: Ձեւերը փակցուր ժապաւէններուն վրայ: Ժապաւէնները պատուհանին ետեւը փակցուր վերի եւ վարի ծայրերուն վրայ փակցնելիք երիզներուն կտորներով:



Գ. Կաղանղի ծառին վրայ
 Կաղանղի ծառը: Պէտք ունիս՝ խոնամոխր սեղան մաքրելու (մաքուր) բարակ սպունգ մը, ջրաներկ, ժապաւէն: Սպունգին վրայ գծէ եւ կտրէ կաղանղի ծառի պարզ ձեւ մը: Չրաներկով աւելցուր ծառին զարդերը: Վերի մասէն անցուր ժապաւէն մը:

Կաղանղ պապան: Պէտք ունիս՝ լաթակալ մը, բամբակ, կարմիր խաւաքարտ: Լաթակալին վերի ծայրը գծէ Կաղանղ Պապային աչքերը, թիթը եւ բերանը: Լաթակալին մնացած բաժինը կարմիր ներկէ: Կարմիր խաւաքարտին վրայ գծէ եւ կտրէ Կաղանղ պապային գլխարկը: Չայն փակցուր լաթակալին ծայրը: Գունոց մը բամբակ փակցուր դէմքին տակը (Կաղանղ պապային մօրուքը), եւ գլխարկին ծայրը:
 Հրեշտակը: Պէտք ունիս՝ պողպատեղի տախտակ մը, թափանցիկ թուղթ (քալթ), ներկեր, երկաթէ օղակ մը: Պողպատեղի տախտակին վրայ գծէ եւ ներկէ հրեշտակին դէմքը եւ հագուստը: Թափանցիկ թուղթին վրայ գծէ եւ կտրէ հրեշտակին թեւերը: Չանոնք փակցուր տախտակին ետեւը: Երկաթէ օղակը փակցնելիք երիզով փակցուր հրեշտակին գլխուն ետեւը:
 Թռչունը: Պէտք ունիս՝ գունաւոր խաւաքարտ, փայլուն թել, փայլուն թուղթ: Գունաւոր խաւաքարտին վրայ գծէ թռչունին մարմինը. մարմնին վրայ ճեղք մը բաց (կրնաս չափահասէ մը խնդրել, որ քաբըրով այդ ճեղքը բանայ): Թռչունը կտրէ: Փայլուն թուղթէն կտրէ հաստ երիզ մը: Չայն ձեռնադաշնակի ձեւով ծալլէ, եւ անցուր թռչունին մարմնին ճեղքին մէջէն: Թռչունին վրայ վրայն անցուր փայլուն թել մը, եւ թռչունը անցուր կաղանղի ծառին ճիւղերէն մէկուն վրայ:


Ժ Ա Մ Ա Ն Ց



Կտերը իրարու միացուր 1 - 28՝ ամբողջացնելու համար պատկերը:



Կրնաս գտնել կապիկին շուրջը:



Գիտնալով, թէ իւրաքանչիւր խորհրդանիշ կը ներկայացնէ տարբեր վայրկեաններու տեսողութիւն մը, ո՞ր խխուճը ամենն ուշը պիտի հասնի:

ԱՆՀԱՄԱՏԱԼԻ

Ի՞նչ կրնայ պատահիլ թղթադրամներով, ծաղիկներով եւ դահեկաններով պատրաստուած գարդարանքներով Կաղանղի ծառի մը:
 Մառը կը գողցուի:
 Ահա, թէ ինչ պատահեցաւ անցեալ տարի Օսլոյի (Նորվեգիոյ) Կաղանղի ծառին:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Մի մոռնար
 Կաղանղ Պապայէն
 խնդրելու

ՊՁՏԻԿ-ՍՁՏԻԿ ԳԱՒԱԹ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ
 ԼԱՌԱԳՈՅՆ ՆՈՒՒՐԸ

Գաւաթները կարելի է գտնել հետեւեալ գրախանութներուն մէջ

- Բամպագային, Շարփոյան կեդրոն, Պոլոք Բամուս
 - Նարեկաչի, Պոլոք Բամուս
 - Obellix, Ասթիլիաս

ՕՐԱՏԵՏՐ

ԵՐԳԱՀԱՆԴԵՍ / ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳ

ՄԱՐՍԷԼ ԽԱԼԻՖԵԻ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԵԼՈՅԹՆԵՐԸ

Իրերայաջորդ երեք էլոյթներով լիբանանցի տաղանդաւոր երաժիշտ Մարսէլ Խալիֆէ պիտի ներկայանայ հանրութեան: 19, 20 եւ 21 Դեկտեմբերին «ԵՆԻՆԵՍՔՕ»-ի սրահին մէջ տեղի ունեցող անոր երգահանդէսներուն պիտի ընկերակցին երգչուհի Ամինէ եւ «Մայեատին» նուագախումբը: Միջազգային շրջապատոյտի մը ծիրին մէջ կապակերպուող լիբանանեան այս համերգները պիտի յատկանշուին հարուստ յայտագիրով, որ պիտի ընդգրկէ արուեստագէտին հին թէ նոր երգերէն ընտրանի մը, ինչպէս նաեւ անոր նոր ձայնապնակէն: «Մուսաապա»-էն գործեր: Այս էլոյթներուն առիթով Մարսէլ Խալիֆէ ըսած է. «Հայրենիքիս մէջ եմ եւ կ'ուզեմ հաւատարիմ ըլլալ այն հեռաւոր լոյսին եւ «ոչ» ըսել այս թշուառութեան ու ստորութեան ալիքին»:

Նշենք, որ Մարսէլ Խալիֆէի էլոյթները կը սկսին երեկոյեան ժամը 8:30ին:

ԱՅՍՈՐ

- «Մեղեդան երգեր»՝ 20 Դեկտեմբերին, ժամը 20:30ին, «Մոնո» սրահին մէջ: Ելոյթ կ'ունենայ Գեորգ Բերեմբեյանը՝ դաշնակի ընկերակցութեամբ Քամիլայի եւ մասնակցութեամբ Համազգայինի «Կարկաչ» երգչախումբին:
- Երգահանդէս՝ Մարսէլ Խալիֆէի էլոյթ, ԵՆԻՆԵՍՔՕ ժամը 20:30ին:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Տը լա փենքիւր սեմփլըման», Սամիր Թապիթի գործերը, «Ալիս Մոդապապ» ցուցասրահ, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Կրանտ Ե Ժեոն», «Ժանին Թուպէյ» ցուցասրահ, մինչեւ 31 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Սըրսը» բանգարանի «Աշնանային սալուն» բանգարանին ցուցասրահին մէջ, մինչեւ 17 Յունուար:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Քիլ պիւր», Քրիս Սեբաֆիին - Լէյնիի գործերը, «Մընել» ցուցասրահ, մինչեւ 7 Յունուար:
- Թատրոն՝ «Բամա ալ արտ, բազալիքա մին... Ֆաուր», ժամը 20:30ին, «Քազիմ տիւ Լիպան», մինչեւ 29 Փետրուար:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Պարսելոնա» զգացումները քաղաքը խորագիրով «Սերվանթես» հիմնարկին մէջ, Մարտտ փողոց մինչեւ 6 Յունուար, ժամը 13:00էն 20:00, բացի Կիրակի օրերէն:
- Միացեալ համերգ Ամերիկեան համալսարանի եւ «Սոսայիթի» երգչախումբերուն, 17 Դեկտեմբերին համալսարանին մէջ, ժամը 20:00ին:
- Նոր Տարուան ցուցահանդէս՝ «Սարգ Պէկ» մէջ, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Ձեռնային աշխատանքներու հաւաքական ցուցահանդէս՝ «Արուեստագէտներու զբաղում» խորագիրով: «Էփրով Տարբիտ» սրահին մէջ, մինչեւ 23 Դեկտեմբեր:
- Մանկական նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Ռոշան» ցուցասրահին մէջ, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Սերունդէ Սերունդ» խորագիրով, «Ժանին Թուպէյ» ցուցասրահին մէջ, մինչեւ 31 Դեկտեմբեր:

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԵՁ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը իմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուի սակարանին մէջ օտար դրամանոցներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ. Սուրիական թղթուսկի 28,60 - 28,85 լ.ն. Բուրիան տինար 5115,00 - 5140,00 լ.ն. Յորդանանեան տինար 2121,00 - 2131,00 լ.ն. Պահրէյնեան տինար 3985,00 - 4010,00 լ.ն. Ա.Մ.Էմիրութեան տիրիամ 410,75 - 412,75 լ.ն. Բարաբան ռիալ 413,75 - 415,75 լ.ն. Մեյուտական ռիալ 402,00 - 404,00 լ.ն. Օմանեան ռիալ 3895,00 - 3920,00 լ.ն. Եգիպտական կիւնէ 220,00 - 230,00 լ.ն. Անգլիական սթըրլին 2660,00 - 2670,00 լ.ն. Չուիցերիական ֆրանք 1200,00 - 1205,00 լ.ն. Թրքական լիրա 104,50 - 105,0 լ.ն. Կիպրական փաունտ 3175,00 - 3200,00 լ.ն. Ճափոնական հապար եէն 13,90 - 14,00 լ.ն. Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն. Բանտական տոլար 1130,00 - 1135,00 լ.ն. Աստրալիական տոլար 1108,00 - 1113,00 լ.ն. Եւրօ 1868,00 - 1878,00 լ.ն.

● ՈՍԿԻ
Անգլիական մէկ ոսկի 157,000 - 162,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի 142,500 - 147,500 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի 131,500 - 136,500 լ.ն.
Մեքսիկական փետու 755,000 - 775,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 19,715,500 - 19,915,000 լ.ն.
Մէկ օսն ոսկի 409,30 - 409,80 \$
Մէկ օսն արծաթ 5,68 - 5,70 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
Եւրօ 1.2389 - 1.2393
Քանադական տոլար 1.3315 - 1.3320
Չուիցերիական ֆրանք 1.2558 - 1.2563
Ճափոնական եէն 107.57 - 107.62
Մէկ սթըրլին 1.7660 - 1.7664

Մէկ փոլար 565 դրամ
● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ
Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում
Ա. կարգ 4.21 4.28
Բ. կարգ 4.26 4.26

ԼՈՒՍԱՅԱՓՈՒՆ ԱԼԵՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳՐԻԳՈՐ ԱՐՄԷՆԵԱՆԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱՐԷԼ ԳԵՐՈԳ ԱՐԷԼԵԱՆԻ (սարկաւագ) մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, ԺԻՆԿԻ Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱԼԻՍ ՄԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ (ծնեալ՝ Տէր Սահակեան) մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՌՈԶԱ ՄԻՐԱԶԵԱՆԻ (ծնեալ՝ Պօղոսեան) մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, ՌՈՄԵՂԻ Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԱՐԳԵԻ ԱՆՈՒԾԻԿԵԱՆԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5619 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | ՇՈՒՐՈՒՄԱԿԱՆ | ՈՒՂԱՆԱՅԵԱՑ |
|---|---|
| 1. Յետայի խմբապետ՝ Օհան Օհանեան - Արցախի հնազանդներէն: | 1. Դասալիք կամ խուսափուկ: |
| 2. Ջապէլ Եսայեանի երկերէն՝ «... մէջ»: | 2. Գետեգրեայ ծառ - Վահագն Դաւթեանի երկերէն՝ «Անկէզ...»: |
| 3. Հագագ - Ապաւու: | 3. Խաղողի կոխած - Եւրոպական մայրաքաղաք: |
| 4. Չայնանիլ - Այրուրեանէն - Չաչ - Յրանսական գետ: | 4. Վերահաս Կրկնուած բաղաձայններ: |
| 5. Զգեստի թել: | 5. Թուրուտ - Այրուրեանէն - Բոսոր: |
| 6. Միամեայ ուլ - Նոյի որդիներէն: | 6. Արեւելեան Եփրատ: |
| 7. Կարիճ - Դաշխուրան - Ճպոտ: | 7. Սանդ - Սրուակ: |
| 8. Հայաստանի լեռներէն - Իգական օտար անուն: | 8. Եսայաշտու թիւն - Յուրակեան ածական: |
| 9. Խաղաղ - Հաճար: | 9. Սկաուտ - Հայաստանի քաղաքներէն: |
| 10. Յուրանեան ածական - Իգական անուն - Լիբանանի գետերէն: | 10. Տառի մը դրացիները - Իւրայիլ Օրիի ուղեկից վարդապետը: |
| 11. Կողմ - «Նահապետ» գրչանունին տէրը: | 11. Պահեստ - Դիտել: |

ԹԻՒ 5618

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ն	Բ	Ճ	Ո	Ւ	Ք	Ա	Պ	Ա	Մ
2	Մ	Ր	Ց	Ա	Ն	Ք	Ա	Ռ	Ա	Մ
3	Ա	Կ	Ց	Ց	Ք	Ք	Ն	Ա	Տ	Ս
4	Ն	Ա	Ն	Ա	Ա	Ա	Ք	Բ	Մ	Ս
5	Ք	Ա	Ք	Ո	Ի	Ե	Ե	Ի	Ս	Ս
6	Պ	Ա	Մ	Ա	Ր	Ա	Կ	Ե	Ա	Ո
7	Ա	Գ	Ո	Ն	Ա	Ր	Ա	Ր	Ա	Ի
8	Ս	Ի	Ր	Կ	Ե	Մ	Ա	Ր	Կ	Կ
9	Ս	Ի	Ր	Կ	Ե	Մ	Ա	Ր	Կ	Կ
10	Ն	Ա	Ն	Ա	Ա	Ա	Ք	Բ	Մ	Ս
11	Գ	Ա	Լ	Օ	Ն	Ք	Ա	Ր	Ի	Օ

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Այս շաբաթավերջին պիտի շրջիք շուկան՝ տօնական օրերու նուերներ գնելու պատրաստութիւն տեսնելու: Ձեր հարազատները պիտի գարմանան ձեր նշանակին եւ ձեր մտածումներուն:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Դուք եւ ձեր կողակիցը առօրեայ գործերու մէջ բարոյած էք: Արդեօք կը մտածէ՞ք անկէ դուրս ելլելու մասին, որպէսզի քիչ մը փոխուի ձեր տրամադրութիւնը:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Մանրաբեռնուած աշխատանքներ ունիք, որոնցմէ այսօր պիտի ձերբազատիք՝ նուիրուելու համար ձեր հարազատներուն: Այսպիսով պիտի գուարանաք ընտանեօք:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Այսօր պիտի հանդիպիք անձի մը, որ համակրելի պիտի թուի ձեզի, անոր հետ սիրով պիտի կապուիք: Օրը պիտի ընթանայ համերաշխ եւ գուարք մթնոլորտով:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Հանդը պիտի գգաք ընթերցանութեան՝ կարդալով հետաքրքրական գիրք մը: Արուեստն ու մշակոյթը մարդկային զգացումները հանդիսանելու կը ծառայեն:

ԿՈՅԱ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Ձեր դրացիները ձեզի պիտի ընեն բացառիկ ծառայութիւն մը: Ձանոց հրաւիրեցէք ճաշի: Գիտցէք, որ փոխ յարաբերութիւնները պէտք է ըլլան գիտակից վերաբերումով:

ԿՇԻՈՒՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Վերջին օրերու ձեր գնումներուն հաշուեցոյցը թեթեւեղած է, անոր փոխարէն պիտի կատարէք ազուրկ պտոյտ մը ձեր բարեկամներով եւ հարազատներով:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Դարձեալ սքանչելի օր մը պիտի ապրիք ձեր կնոջ, ամուսնոյն կամ սիրածին հետ: Օրը պիտի անցնի փառաւոր ուրախութեամբ: Երանելի էք:

ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Այդքան սիրով էք ձեր հարազատներուն, եւ մասնաւորաբար ձեր կողակիցին հետ, որ պիտի կարենաք ձեր շուրջը բարիք սերմանել: Սէրը ինքնին բարիքի աղբիւր է:

ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Որոշած էք ծրագիր մը, գոր չէք կրնար կատարել նախնին, որովհետեւ ծանր է մէկ անձի համար: Ուրեմն բարի կամեցողութիւնը չէ, որ կը պակսի ձեզի, այլ՝ ներքին կարելիութիւնը:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Ձեր շուրջը գտնուողները ձեզ պիտի գովաբանեն, մինչդեռ դուք շատ գայուն եւ նման խօսքերուն դիմաց: Այսօր պիտի շփացնեն ձեզ մտքը: Ուրախացէք:

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Արձակուրդ մը անցընելու ծրագիր մը ունիք. այդ պիտի անցնի հիանալի կերպով: Ուրեմն ձեռնարկեցէք այս ճամբորդութեան: Օրը նպաստաւոր է:

ԱԶԳԱԿ 50 ՏԻՄՐԻ ԼՏՈՒՄԸ
20 Դեկտեմբեր 1953

ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ ԻՆՉՈՒՄ ՊԱՇՏՕՆԱԿ ԵՂԱՒ ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

ԽՐՈՒՇՉԵԻ ԹԱԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ

Խորհրդային Միութեան գորաւորագոյն մարդերէն մէկը դարձած Նիքիթա Խրուշչեւ, իր կացութիւնը սկսած է աւելի զօրացնել՝ շրջանային «հանրապետութիւն»ներուն մէջ սկսած մաքրագործումներով:

Անցեալ երկու շաբաթներուն ընթացքին, Խրուշչեւ իր բաթը երկարած է Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան վրայ. ան նոյն չափով հետաքրքրուած է նաեւ Լեհիկոնքի եւ Թուրքիոյ շրջաններով: Պարապ մնացած պաշտօններուն վրայ Խրուշչեւ արդէն իսկ կը տեղաւորէ իրեն հաւատարիմ անձերը:

Ստալինի մահէն քիչ ետք, երբ Խրուշչեւ եղաւ կուսակցութեան առաջին քարտուղարը, կ'ակնկալուէր, որ ան ձեռնարկէ Հայաստանը մաքրագործելու «անցանկալի տարրերու ազդեցութեանը»:

Այս մաքրագործումը խորհրդային քաղաքական ասպարէզէն կը հետնացնէ Խրուշչեւի անձնական հակառակորդներէն ամէնէն կատարիկ՝ Գրիգոր Ա. Յարութիւնեանը, որ 1937էն ի վեր անաշիք քարտուղարն էր Հայաստանի Համայնավար Կուսակցութեան:

Խրուշչեւ-Յարութիւնեան գծաւորութիւնը առաջին անգամ ըլլալով շատ վրան բաց կերպով յայտնուեցաւ 1951ին, Խրուշչեւ, իբրեւ մէկ անգամը Համայնավար Ազգայնեան խորհրդային խորհուրդին առաջարկ մը ներկայացուցած էր, որուն համաձայն, միլիոնաւոր գիւղացիներ իրենց գիւղերէն պէտք էր փոխադրուէին հինգ հազար կամ աւելի բնակիչներ ունեցող կեդրոնական ագարակներու «Ակրոկորոտ»ներուն մէջ:

21 Մարտ 1951ին Յարութիւնեան հրապարակաւ յարձակեցաւ «կարգ մը ընկերներուն» այն քաղաքականութեան վրայ, որ «կը միտէր իր հունէն շեղեցնել խորհրդային ագարակային քաղաքականութիւնը՝ պահանջելով ակրոկորոտներու ստեղծումը»:

Խրուշչեւի քաղաքականութեան դէմ Յարութիւնեանի կատարած քննադատութեան հետեւեալ տարւան 26 Մայիսին արձագանգեց Ազգայնեանի Համայնավար Կուսակցութեան քարտուղար Պակարով: Նշանակելի է, որ Պակարով մաքրագործութեան այս տարուան 19 Յունիսին:



Յարութիւնեանի վտարումը աւելի ազդու դարձնելու նպատակով, Խրուշչեւ Հայաստան զրկեց անոր «ստորագրած» մը, Փէթեր Փոստելովը, որ յանուն Մոսկուայի պիտի ղեկավարէր Հայաստանի Համայնավար Կուսակցութեան կեդրոնական կոմիտէի արտակարգ նիստը:

Կեդրոնական կոմիտէն արագօրէն հրամայեց Յարութիւնեանի հետնացումը եւ պաշտօնագուրկ ըրաւ երկրորդ քարտուղար Կ. Մարտիրոսեանն ու քարտուղար Բ. Գրիգորեանը:

Խրուշչեւ իր պաշտօնէն հետնացուցած է նաեւ Լեհիկոնքի շրջանին կեդրոնական կոմիտէի առաջին քարտուղար Վասիլի Ատրիանովը, որ մինչեւ հիմա անմերձեցալի անձ մը կը նկատուէր տրուած ըլլալով, որ ան ամէնէն մօտիկ բարեկամներէն մէկը եղած է Ստալինի եւ երկարատեմեք անգամակցած է Համամիութեանական Համայնավար Կուսակցութեան կեդրոնական կոմիտէին: Մինչեւ Ստալինի մահը, Ատրիանով մնայուն անգամ էր վերին ղեկավար նկատուող Փրէզիտիումի. ան վերընտրուած էր անցեալ տարուան վերջերս գումարուած Կուսակցութեան 19րդ համագումարին կողմէ:

Ատրիանով մինչեւ հիմա ճանչցուած էր իբրեւ Մայիսեանի մարդը, սակայն ան ղօթախտութիւնը ուն

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՎԱՂԸ Հ. Մ. Բ. Մ. - ՍԱԺԷՍ

Լիբանանի ֆուտբոլի ասոցիացիայի նախագահության 7րդ հանգրուանի մրցումներում, այսօր տեղի կ'ունենան երկու ճակատումներ, մինչև մնացել չորս մրցումները տեղի կ'ունենան վաղը:

Պարագուայի դիրքը գրաւող Նրժմէ, որ այժմ իր ունեցած կոլեկտիվի շնորհիւ կը գերապանցէ Ախոը, որ կարելի է պիտի ընէ պարագուայեան մատնելու համար Թատանոն Սուրը (4րդ): 2րդ դիրքը գրաւող Ախո կարելու մրցումը մը ունի կատարելիք, երբ ճակատի Անսարի դէմ:

Հ. Մ. Բ. Մ. ֆուտբոլի ներկայացուցչական խումբը, որ վաղը՝ կիրակի, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Սաժէսը, իր կարելի է պիտի ընէ արձանագրելու համար եղանակի իր առաջին յաղթանակը: Նշենք, որ Հ. Մ. Բ. Մ. եղանակի իր առաջին կէտը Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ կրցաւ հաւաքել՝ Սաֆայի դէմ տեղի ունեցած մրցումին (1-1):

Ստորեւ՝ 7րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Շապապ Սաիէլ - Սալամ	2:15	Ախո
Սաֆա - Օլիմփիք	8:30	Պէյրուք
ՎԱՂԸ		
Հ. Մ. Բ. Մ. - Մապարա	2:15	Ժունիէ
Հ. Մ. Բ. Մ. - Սաժէս	2:15	Համուտ
Նրժմէ - Թատանոն Սուր	2:15	Սալամ
Անսար - Ախո	4:45	Պէյրուք

ԱՅՍՕՐ

Հ.Մ.Բ.Մ. - ԱՆԻՊԱԼ ԶԱՐԼԷ

Լիբանանի ֆուտբոլի ասոցիացիայի Ա. դասակարգի ասոցիացիայի 4րդ հանգրուանի մրցումներում, այսօր՝ Շաբաթ Հ.Մ.Բ.Մ.ի աղջկանց ներկայացուցչական խումբը, «Աղբալիս» - Հ.Մ.Բ.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ կը հիւրընկալէ Անիպալ Զահլէն: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 20:00ին:

ԸԱԼՉԻՕ

Ա. ԷՍ. ՌՈՍԱ ՊԻՏԻ ՓՈՐՁԷ ԴԱՌՆԱԼ ԱՇՆԱՆ ԱՆՈՅԵԱՆ

Իտալիոյ ֆուտբոլի ասոցիացիայի նախագահության (Քալչիո) 14րդ հանգրուանի մրցումներում, պարագուայի դիրքը գրաւող Ա. Էս. Ռոսա, որ այսօր հիւրը պիտի ըլլայ նախաձեռնող դիրքը գրաւող Էսփոլիի, յաղթանակի մը պարագային պիտի հանդիսանայ աշխարհային ակադեմիայի, որ 14րդ հանգրուանի մրցումներին ետք, Քալչիոն երեք շաբթուան ձեռնային արձակուրդ կ'առնէ:

Ռոսայի նման ցարդ պարտութիւն չէ կրած, պիտի հիւրընկալէ Ռոսինի: Նշենք, որ Ա. Սէ. Միլան, որ յետագում մրցումը ունի կատարելիք Սիենայի դէմ, այժմ երեք կէտով ետ կը մնայ Ա. Էս. Ռոսային:

Ստորեւ՝ 14րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուքի ժամով).

ՎԱՅՕՐ	ԺԱՄ
Փարմա - Ռեճինա	19:00
Էմփոլի - Ա. Էս. Ռոսա	21:30
ՎԱՂԸ	
Ա. Սէ. Միլան - Ռոսինի	16:00
Քիեո - Անքոնա	16:00
Լեչէ - Եովենթուս	16:00
Փերուճիա - Պրեշիա	16:00
Սամտորիա - Մոտենա	16:00
Սիենա - Պրոնիս	16:00
Լացիո Ռոսա - Ինթեր Միլան	21:30

ՍՊԱՆԻՈՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 17ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Սպանիոյ ֆուտբոլի ասոցիացիայի 17րդ հանգրուանի մրցումներում, պարագուայի դիրքը գրաւող Ռեալ Մատրիտ, որ այժմ երկու կէտի առաւելութիւն մը ունի Վալենսիայի վրայ (2րդ), շաբաթավերջին կարելու մրցումը մը ունի կատարելիք Մալորքայի դէմ: Հակառակ անոր որ դաշտին տեղերը այժմ կը գրաւեն 10րդ դիրքը, սակայն անոնք իրենց կատարած վերջին վեց մրցումներուն ընթացքին արձանագրած են հինգ յաղթանակ:

ՎԱՅՕՐ	ԺԱՄ
Ռեալ Մատրիտ - Ռ. Վալենսիա	18:30
Աթ. Մատրիտ - Ռասիլ Սարսուէր	20:30
Վալենսիա - Սեւիլա	22:30
ՎԱՂԸ	
Տեփորթիս Բորնա - Էսփանիոլ	18:00
Ալպանթէ - Ալբորքո Պիլասո	18:00
Ռեալ Պրեթա - Վիալեա	18:00
Օսասունա - Ռեալ Սարսուէր	18:00
Մուրսիա - Մալախա	18:00
Մալորքա - Ռեալ Մատրիտ	20:00
Պարսելունա - Սեւիլա Վիլո	22:00

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՎԱՂՈՒՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթացում՝ արաբերէն
9:30 Զաղաքական լուրեր/ հայերէն
10:00 Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարէն Ս. պատարագի ուղղակի ձայնագրում
12:30 Զաղաքական լուրեր/ հայերէն
1:00 Ազգային-յեղափոխական երգեր
2:30 Զաղաքական լուրեր/ արաբերէն
2:45 Յունարեւ երգերու ունկնդրութիւն
4:30 Զաղաքական լուրեր/ արաբերէն
6:30 Զաղաքական լուրեր/ հայերէն
8:00 Ժճ գրաձեռնութիւն

ԼԵՎԱՍ

ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ ՎԱՂԸ

Հ. Մ. Բ. Մ. - ԼԵՎԱՍԻ յանձնախումբին կողմէ կազմակերպուած փինկ-փոնկի մրցումները, որոնք տեղի պիտի ունենան վաղը՝ կիրակի, Աղբալեան Հ. Մ. Բ. Մ. Մարզամշակութային համալիրին մէջ, պիտի ըլլան 2003-2004 եղանակի ԼԵՎԱՍԻ երկրորդ հանգրուանի մրցումները:

Փինկ փոնկի մրցաշարին իրենց մասնակցութիւնը բերող աշակերտներէն կը պահանջուի առաւելու ժամը ճիշդ 8:30ին հոն ներկայ գտնուիլ: Ժամը ճիշդ 9:00ին մրցումները կը սկսին: Անոնք պիտի տեսն մինչեւ ժամը 1:00:

ԳԱՇԻՐԷ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՃԱՏՐԱԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Այսօր՝ Շաբաթ, Գահիրէի մէջ (Եգիպտոս) կը սկսին ճատրակի արաբական աշխարհի անհատական ասոցիացիայի մրցումները, որոնք կ'արտահայտեն յաղթանակը 29 Գեղտեմբերին:

ԶԵԼՍԻ ՊԱՏՐԱՍՏ՝ 105 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՐ

ՎՃԱՐԵԼՈՒ ԵՒ ՍԹՐԸՐԸՐՈՅԻ ՀԱՄԱՐ
Չէլսիի պատասխանատուները յայտնեցին, թէ պատրաստ են Մանչեսթըր Եւնայթեդի հոլանտացի յառաջապահ՝ Ռուտ ֆան Նիսթըրլի փոխանցման համար աշխարհի ամենամեծ մրցանակը՝ վճարելով 105 միլիոն ամերիկեան տոլար:

ՄՈՆԵՏԻԱԼ ՎԱՆԱՅ ՍՓՈՐ

Նոր յայտագիրներու ծիրին մէջ 1 Յունուար 2004-ն սկսեալ «Վանայ Զայն»-ն շաբաթական հերթականութեամբ պիտի ձայնագրուի «ՄՈՆԵՏԻԱԿԱՆ ՎԱՆԱՅ ՍՓՈՐ»-ը: ՆԱԳ - ՄՐՑԱՆԵԸ, որուն մասնակցները Մոնեթիալի դրութեամբ պիտի մրցին իրարու դէմ վերջապահութեան առաջին երեք դիրքերը գրաւողները պիտի ստանան արժեքաւոր մուրհակներ:

Անոնք, որոնք կը փափաքին մասնակցի այս մրցանքին, պետք է որ մինչեւ Երեքշաբթի, 30 Դեկտեմբեր 2003 հեռաձայնելով «Վանայ Զայն»:

01-267657 եւ 01-241199 թիւերուն, արձանագրելով շարտադրութեան մաս:

ԱՃԱՊԱՐԵՅՔԷ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵՅՔԷ «ՄՈՆԵՏԻԱԿԱՆ ՎԱՆԱՅ ՍՓՈՐ»-ԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ 2020

ՄՐՑՈՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԸ 2020 ԹԻՄԱԿԱՆԻՆ

«Հայաստան 2020» հասարակական ոչ առևտրային ծրագիրը յայտարարում է մրցոյթ հետեւեալ նմանակարգով:

1. Աղբարկ	1,000.00 ԱՄՆ տոլար
2. Յօդուածներ / հրապարակումների շարք	2,000.00 ԱՄՆ տոլար
3. Տեսառձայնագրութեան / հեռուստատեսային թող - շոնների շարք	3,000.00 ԱՄՆ տոլար
4. Սցենար	5,000.00 ԱՄՆ տոլար

Մենք փնտռում ենք նոր ինքնատիպ պատկերացումներ այն մասին, թէ ինչպիսիք կը լինի Հայաստանը 20 տարի անց: Մրցոյթին ներկայացուող ակնարկը, յօդուածը, հեռուստաշոն կամ սցենարը պետք է պատկերի կամ նկարագրի սովորական հայ մարդու առօրեան մասնաշաղկապը՝ այն փոփոխութիւնների (մրցոյթ), որոնք հաւանական են պատկերման տեսանկյան, քաղաքական, հասարակական, մշակութային, կրօնական ոլորտներում արտաքին եւ ներքին փոփոխութիւնների շնորհիւ: Ներկայացուող բոլոր միջոցները պետք է հիմնուեն «Հայաստան 2020» ծրագրի շրջանակներում իրականացուած հետազոտութիւնների արդիւնքների եւ մշակուած 4 հիմնական սցենարների վրայ: Նշուած միջոցները տեղադրուած են ծրագրի ինտերնետային էջում՝ www.armenia2020.org, հայերէն, ռուսերէն եւ անգլերէն լեզուներով:

ՊԱՇՏՊԱՆՆԵՐ ԵՒ ՎԱՆՈՆՆԵՐ

Ընդհանուր պահանջներ.

- Միջոցներ կարող են ներկայացուել հայերէն, ռուսերէն կամ անգլերէն լեզուներով, հայ կամ օտարերկրեայ անհատների, հայկական կամ օտարերկրեայ կազմակերպութիւնների, Հայաստանի քաղաքացիների եւ արտասահմանցիների կողմից:
- Եթէ նախքան մրցոյթին մասնակցելը միջոցները տրամադրուել են հրատարակուել կամ հեռարձակուել է, ապա ներկայացուած միջոցները պարտադրի պետք է նշուի լրատուամիջոցի անունը, հրատարակման կամ հեռարձակման ամսաթիւը, տպագրուած միջոցները պետք է նշուի վերնագիրը ու համարը:
- «Հայաստան 2020» ծրագրին իրաւունք է վերապահուած ընդունելու, մերժելու եւ խմբագրելու մրցոյթին ներկայացուած միջոցները:
- Ներկայացուած միջոցները չեն վերադարձուելու:
- Մրցանակները չեն կարող փոխանցուել այլ անձանց:
- Ստացուած միջոցների բովանդակութիւնը ենթակայ չէ քննարկման դիմորդի եւ ծրագրի ներկայացուցչի միջոցով:
- «Հայագիտի յայտնաբերման դեպքում միջոց չի ընդգրկուելու մրցոյթում: Բոլոր յղումները պետք է պահպանուեն եւ ներկայացուեն:
- Ներկայացուող միջոց պետք է լինի բժօրհնակ, նրանում ընդգրկուած փաստերը՝ ստոյգ եւ ճշդուած: Նիւթի հրապարակումը պետք է խախտի որեւէ անհատի կամ կազմակերպութեան հեղինակային իրաւունքը:
- Բոլոր ներկայացուած միջոցները եւ դրանց հրապարակման իրաւունքը պատկանում է «Հայաստան 2020» ծրագրին: Նիւթերը կարող են օգտագործուել, խմբագրուել եւ մշակուել գովազդային կամ այլ նպատակներով, ներառեալ՝ տեղադրուել ինտերնետային էջի վրայ (www.armenia2020.org) առանց ներկայացուցչի համաձայնութեան կամ դրամական պարգեւատրման: «Հայաստան 2020» ծրագրին հեղինակների համաձայնութեան կամ դրամական պարգեւատրման անհանգիստ կամ կազմակերպութիւնների իրաւունք է վերապահուած օգտագործելու մրցոյթի յաղթող ծանուցուած անձանց կամ կազմակերպութիւնների անունները ու հասցէները մրցոյթին առնչուող գովազդային միջոցներում, առանց գաղտնագրման, հեղինակի թոյլտուութեան կամ դրամական փոխհատուցման, բացառութեամբ այն դեպքերի, երբ դա արգելուած է օրէնքով:
- «Հայաստան՝ 2020» ծրագրին իրաւունք է վերապահուած փոփոխելու, լրացնելու կամ չեղեալ համարելու մրցոյթի կանոնները անհրաժեշտութեան դեպքում:

Ա. ԱՎԱՐԿ

- Մրցոյթին կարող են մասնակցել 2003 թ. Նոյեմբերի 1ի դրութեամբ 16 տարեկան բոլոր անձինք: Նախընտրութիւնը տրուելու է ԲՈՒՀԵՐԻ ՈՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԵՒ ՍԱԿԻՐԱՄԱՆՆԵՐԻՆ:
- Ավարակ պետք է պարունակի ոչ աւել քան 1500-2500 բառ (3-5 էջ, առաջարկուող տառատեսակը՝ Times New Roman 12):
- Ավարակին կից առանձին էջի վրայ պետք է նշուի հեղինակի անունը, տարիքը, ուսումնական հաստատութեան հասցէն ու բաժինը, ինչպէս նաեւ հեղինակի հասցէն ու հեռախոսահամարները:
- Ընդունուած են նաեւ մէկից աւելի հեղինակ ունեցող միջոցներ:

Բ. ՅՕՂՈՒՆԻՆՆԵՐ ԵՒ ՎԱՆԱՅՆԵՐԻ ԶԱՐԸ

- Մրցոյթին կարող են մասնակցել լրագրողներ, որոնք աշխատում են լրի կամ կէս ղրոյթով որեւէ հայկական կամ արտասահմանեան օրաթերթում, ամսագրում, խմբագրութիւնում, ինտերնետային ամսագրում: Կարող են դիմել նաեւ անկախ լրագրողներ:

Բոլոր միջոցները պետք է ստացուեն լինելով «Հայաստան 2020» ծրագրի կողմից (Փոստային արկ. «Հայաստան 2020», Տեղեք, Մալաթի փ. 40, բն. 35, 375009, Երեւան, ՀՀ կամ էլ. փոստ. award@armenia2020.org): Նիւթերը անձամբ առաքելու դեպքում կարող էք պահանջել ստացական: Մրցոյթի արդիւնքների մասին տեղեկացուելու են միայն յաղթողները:

